

## Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

- ԲԱՔԱՅԱՆ ԱՐԱՄ.**—«Հա, գիրքը և տպագրությունը», Հայպետհրատ, 1963, տպարանակր 5000 օրինակ, 173 էջ, գինը 36 կոպ.:
- ՀԱՐՈՒԹՅՄԻՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ.**—«Երգի հաննարը» (Սայաթ-Նովա), Հայպետհրատ, 1963, տպարանակր 5000 օրինակ, 262 էջ գինը 49 կոպ.:
- ԲԱՂԱՅՈՒՆ ԱՐԱՄ.**—«Ինչ էլ գեղեցիկը», Հայպետհրատ, 1963, տպարանակր 3000 օրինակ, 78 էջ, գինը 4 կոպ.:
- ՍԱՐԳՍՅԱՆ ԽՈՐԵՆ.**—«Սայաթ-Նովա», ՀՍՍՐ ԳԱ հրատարակչություն, 1963, տպարանակր 5000 օրինակ, 126 էջ, գինը 20 կոպ.։ Ուսումնասիրությունների ծանոթագրությունների հարուստ բաժին և սուսերեն լեզվով ամփոփում:
- ՄԱՂԽԱՍՅԱՆ ԱՐՄՈ.**—«Սովետական բանակի հայ զործիչները», Հայպետհրատ, 1963, տպարանակր 5000 օրինակ, 494 էջ, գինը 90 կոպ.:
- «ԻՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԵՈՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ»** (ուսումնական ձեռնարկ), Հայպետհրատ, 1963, տպարանակր 5000 օրինակ, 683 էջ, գինը 1 ս. 15 կոպ.:
- ТЕЛУНЦ А. М.**—«Условия и особенности развития науки в социалистическом обществе», Издательство АН Армянской ССР, 1963, тираж 1000 экз., 290 стр., цена 1 р. 13 к.
- «ՄԱՐԲՈՒԶԻ-ԼԵՆԻՆԵՉՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ».** ուսումնական ձեռնարկ, Երկրորդ հրատարակություն, Հայպետհրատ, 1963, տպարանակր 10.000 օրինակ, 928 էջ, գինը 1 ս. 30 կոպ.:
- ԹՈՂԱՍՅԱՆ Ն.**—«Լեռի հակամարտության և ֆալանտեռների մասին», Հայպետհրատ, 1963, տպարանակր 3000 օրինակ, 392 էջ, գինը 56 կոպ.:
- ՍԵՎՅԱՆ Վ. Ղ.**—«Հակակոմունիզմը իմպերիալիզմի գաղափարական գեներ է», Հայպետհրատ, 1963, տպարանակր 3000 օրինակ, 84 էջ, գինը 8 կոպ.:
- ԱԳՈՆՅ Մ. Հ.** «Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը», Հայպետհրատ, 1963, տպարանակր 2000 օրինակ, 291 էջ, գինը 46 կոպ.:
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ.**—«Միջկուլտուրային արտադրական կապերի զարգացումը Հայաստանում», Հայպետհրատ, 1963, տպարանակր 1000 օրինակ, 148 էջ, գինը 18 կոպ.:
- ՄԵԼԻՔՅԱՆ Հ.**—«Ազգայության մասին», Հայպետհրատ, 1963, տպարանակր 3000 օրինակ, 93 էջ, գինը 5 կոպ.:

## Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

Հայաստանի գիտությունների ակադեմիան ուսերեն լեզվով լույս ընծայեց հայ անվանի գիտնական արևելագետ և կովկասագետ Հովսեփ Օրբելու «ԲՆՏԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ընդհանուր խորագիրը կրող միհատորյա ստվար ժողովածուն: Ժողովածուի մեջ տեղ են գտել երախտավոր գիտնականի թողած գիտական հարուստ ժառանգության այն մասը, որ վերաբերում է Կովկասի և Առաջավոր Ասիայի ժողովուրդների, մասնավորապես Հայաստանի, Վրաստանի և Իրանի միջնադարի հնեարանության, լեզվի ու դրականության, պատմության ու արվեստի ամենատարբեր հարցերին:

Իրբի սկզբում զետեղված Սուրեն Երեմյանի առաջարանը, Մառի, Օլգենուրովի ու Կրաչկովսկու, ինչպես նաև ակադեմիկոս Տարլիի «Հայրենասեր պատմաբանը» հոդվածները հանգամանորեն ծանոթացնում են անվանի գիտնականի կյանքին և գիտական ռազմաբեղուն զործունեությանը:

Հատորյակն ունի իլյուստրացիաների հարուստ բաժին, անձնանունների, միֆոլոգիական ու էպիկական անունների, սյուարհագրական տեղանունների ու հուշարձանների ընդարձակ ցանկեր:

Գիրքը լույս է տեսել 1000 օրինակ տպաքանակով, 681 էջ, գինը 4 ու:

Միութենական «Սովետական էնցիկլոպեդիա» հրատարակչությունը ուսերեն լեզվով լույս ընծայեց «ԲՆՏԻՐԱԿԱՆ, ՀԱՆՐԱՎԻՏԱԿԱՆԻ» հերթական երկրորդ հատորը, որտեղ աշխարհի ամենատարբեր ժողովուրդների թատերական գործիչներին առընթեր իրենց պատշաճ տեղն են գտել նաև հայ բեմարվեստի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսին են Հովհաննես Զարիֆյանը, Գուրգեն Զանիբեկյանը, Ժամմենը, Գուրյան-Արմենյանը, Զաֆանը, Հայկանուշ Դանիելյանը, Կարպիս Զորյանը, Լևոն Երեմյանը և շատ ուրիշներ:

Հատորյակում տեղ են գտել նաև արվեստի հայազգի տեսաբաններ Զիվիլեգովին, Հայկ Գյուլիթյոխյանին, Գոյանին, Ռուրեն Զարյանին, ոսթիսյորներին՝ Ստեփան Քափանկյանին, Արմեն Գուլակյանին, Լևոն Քալանթարի և ուրիշներին նվիրված հոդվածները:

Վերջում տրված է գրքում զետեղված հոդվածների հեղինակային ցանկը: